ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023 թվականի _____ _____-ի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 12-րդ ենթակետերը, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը և 6-րդ հոդվածի 1-ին կետի ա), գ), է), ը), ժ) ենթակետերը և 2-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հավելված N 1-ի.

ա. 4-րդ կետի 27-րդ ենթակետի «հզորություն։» բառը փոխարինել «հզորություն.» բառով,

բ. 4-րդ կետը լրացնել նոր 28-րդ, 29-րդ և 30-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«28) **Էներգաարդյունավետության սերտիֆիկատ**՝ համապատասխանության

գնահատման հավատարմագրված և օրենսդրությամբ սահմանված դեպքերում նշանակված մարմնի կողմից տրված փաստաթուղթ, որը ցույց է տալիս գնահատվող օբյեկտի (շենքի, շինության), մեկ կամ մի քանի տրված մեթոդաբանությունների միջոցով հաշվարկված կամ չափագրված, էներգաարդյունավետության դասը»,

«29) **Շենքի էներգաարդյունավետության գնահատում՝** էներգաարդյունավետության ցուցիչի արժեքի գնահատում բազային մեկ կամ մի քանի արժեքների համեմատությամբ»,

«30) **Էներգետիկ աուդիտ (էներգետիկ փորձաքննություն)՝** խորհրդատվական ծառայություն, ուղղված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից շահագործվող շենքերի և շինությունների էներգետիկ հաշվեկշիռների և (կամ) էներգատեղակայանքներում էներգակիրների արդյունավետ օգտագործման ուսումնասիրությանը, առկա տեղեկատվության ստուգմանը, այդ թվում՝ էներգաարդյունավետության ցուցանիշների գնահատմանը, որի արդյունքում տրամադրվում է էներգետիկ աուդիտի (էներգետիկ փորձաքննության) եզրակացություն»,

գ. 25-րդ կետից հետո լրացնել նոր 25.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«25.1) Նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին վերակառուցվող, հիմնանորոգվող, արդիականացվող, ընդլայնվող, վերազինվող բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտների տանսերկուամսյա շահագործումից հետո՝ երկամսյա ժամկետում Կառուցապատողի միջոցների հաշվին ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից համապատասխանության գնահատման հավատարմագրված և օրենսդրությամբ սահմանված դեպքերում նշանակված մարմիններին պատվիրվում է շենքի կամ շինության էներգաարդյունավետության գնահատման ծառայություն (աուդիտ) և ձեռք է բերվում էներգաարդյունավետության սերտիֆիկատ՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի «Համապատասխանության գնահատման ընթացակարգերը սահմանելու մասին» N 56-Ն որոշման համաձայն: »,

դ. 26-րդ կետից հետո լրացնել նոր 26.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«26.1) Նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին վերակառուցվող, հիմնանորոգվող, արդիականացվող, ընդլայնվող, վերազինվող բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտները ենթակա են էներգետիկ աուդիտի՝ համապատասխանության գնահատման հավատարմագրված և օրենսդրությամբ սահմանված դեպքերում նշանակված մարմնի կողմից՝ էներգաարդյունավետության սերտիֆիկատ ձեռք բերելու նպատակով: Ընդ որում՝ էներգաարդյունավետության սերտիֆիկատի (էներգետիկ աուդիտի) ձեռքբերման պահանջը, ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող, արդիականացվող, ընդլայնվող, վերազինվող բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճանի հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների և անհատական բնակելի տների համար կրում է խորհրդատվական (կամավոր) բնույթ և կարող է կիրառվել այդ շենքերի և շինությունների սեփականատերերի

հայեցողությամբ ու միջոցների հաշվին: »,

ե. 30-րդ կետի «բնակչության սակավաշարժուն խմբերի պաշտպանության նկատմամբ» բառերը փոխարինել «բնակչության սակավաշարժուն խմբերի պաշտպանության, օրենքով սահմանված դեպքերում էներգաարդյունավետության և էներգախնայողության, էներգետիկ աուդիտի, ինչպես նաև կրթական, առողջապահական և սոցիալական նշանակության օբյեկտների դեպքում նաև ներքին կահավորման և ինտերիերի ձևավորման նկատմամբ» բառերով,

զ. 170-րդ կետի «գույքային իրավունքների գրանցման» բառերը փոխարինել «գույքային իրավունքների գրանցման և այդ իրավունքների գրանցումից հետո սույն կարգով նախատեսված դեպքերում շենքի կամ շինության էներգետիկ աուդիտի» բառերով, «դադարեցնելու համար:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Ընդ որում՝ էներգետիկ աուդիտի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, էներգետիկ աուդիտի արդյունքներով կազմված էներգաարդյունավետության սերտիֆիկատի օրինակը Կառուցապատողի կողմից ներկայացվում է ՀՀ կադաստրի կոմիտե:» բառերով:

2) հավելված N 5-ի Ձև N 1-2-ը 27-րդ կետից հետո լրացնել նոր՝ 27.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«27.1 Նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի, ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին վերակառուցվող, հիմնանորոգվող, արդիականացվող, ընդլայնվող, վերազինվող բարձր և բարձրագույն ռիսկայնության աստիճանի օբյեկտների էներգաարդյունավետության գնահատում՝ էներգաարդյունավետության սերտիֆիկատի ձեռքբերում»:

2. Սույն որոշմամբ նախատեսված էներգաարդյունավետության սերտիֆիկատի (էներգետիկ աուդիտի) ձեռքբերման պահանջը չի տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական ծրագրերի (նախագծային և շինարարական) գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: